ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 13

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով

ավագանին որոշեց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 27-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից;

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՂԱՋԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ
6. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 27-Ի N 13 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Օրակարգը հաստատելու մասին: /Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

2. ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը սահմանելու մասին:
/Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը աճուրդային կարգով օտարելու մասին:
/Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 56-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

5.Տանձուտ համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը մրցույթ վարձակալությամբ տալու մասին: /Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

6.Նպատակային նշանակությունը փոխելու մասին:
/Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

7. Տանձուտ համայնքի իրավաբանական անձանց աղբահանության վճարների դրույքաչափերը սահմանելու մասին: /Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

Ավագանու անդամներ՝

Արմեն Խաչատրյան

Արտակ Հերիքյան

Տիգրան Սարգսյան

Աղունիկ Ղազարյան

Սարգիս Գուլինյան

Լևոն Թադևոսյան

Ավագ Միքայելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 14-Ն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԳՈՐԾՄԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով Հայաստանի Հանարապետության ՎԻՎ օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Ավագանին որոշում է՝

1.Սահմանել Տանձուտ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը՝համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՂԱՋԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ
6. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Տանձուտ
համայնքի ավագանու 2018
թվականի ապրիլի 27-ի թիվ
14-Ն որոշման

ԿԱՐԳ

ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Տանձուտ Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Տանձուտ համայնքի
սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Տանձուտ համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (ուայսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների (ույսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու սպասարկումը.

3) անհրաժեշտ լուսավորություն անշարժ գույքի մուտքի համար.

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև

բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8.Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ (աշխատանքները.

1) շենքի ճակատին նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթիների գունային փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի

Փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն

ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող

աշխատանքներն իրականացվում են Տանձուտ համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է համայնքապետարանի կողմից:

10. Տանձուտ համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելու ժամկետները:

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբամանների առկայությունը.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալթբետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղաւդրել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

12. համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցվում է համայնքապետարանի հետ:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավմամբ:

15. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունք ում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

16. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած տարածքի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

4)ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մաս իեզրաքարը,

5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված տարածքի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

7) Առանձին դեպքերի համար կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված

ծավալներից տարբերվող ծավալներ՝ համաձայնեցնելով դրանք համայնքապետարանի հետ:

Աշխատակազմի քարտուղար՝ Գրիշա Խուրշուդյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 15-Ն ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի 56-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 15-Ն որոշման ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջով է՝ բյուջեի լրացուցիչ եկամուտների ու ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտությունից ելնելով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի ապրիլի 27

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի 56-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 15-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի ապրիլի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 15-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով , «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Եկամտային մաս ՝

հողի հարկի նախատեսված 7800.0 հազար դրամին ավելացնել 200.0 հազար դրամ հողի հարկի պլան հաստատել 8000.0 հազար դրամ

գույքահարկ շինություններից ՝ նախատեսված 299.2 հազար դրամին ավելացնել 170.0 հազար դրամ , նորը հաստատել 469.2 հազար դրամ

գույքահարկ փոխադրամիջոցներից նախատեսված 4547.5 հազար դրամին ավելացնել 100.0 հազար դրամ նորը հաստատել 4647.5 հազար դրամ :

Ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները

լրացումներ՝

ա.01/ 1 1 4212 հոդվածին ավելացնել 400.0 հազար դրամ,

բ. 01/1 1 4234 հոդվածին ավելացնել 20.0 հազար դրամ,

գ. 01/1 1 4261 հոդվածին ավելացնել 50.0 հազար դրամ,

փոփոխություններ՝

ա.11 /1 2 350.0 հազար դրամ ուղղել 01 /6 1 4241 հոդվածին

բ. 11/ 1 2 50.0 հազար դրամ ուղղել 01/ 6 1 42 14 հոդվածին

գ. 11/ 1 2 250.0 հազար դրամ ուղղել 05/ 1 1 4264 հոդվածին

դ. 11/ 1 2 100.0 հազար դրամ ուղղել 01/ 6 1 4269 հոդվածին

2.Ֆոնդային բյուջեի մասում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները

հողի օտարումից մուտքեր ավելացնել 2000.0 հազար դրամ

ծախսային մասում՝ 2000.0 հազար դրամը ուղղել 01/6 1 5112 հոդվածին:

08/2 3 5113 հոդվածից 1000.0 հազար դրամը ուղղել 04/51 5113 հոդվածին

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

4. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

5. ՂԱՋԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ

6. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 16-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով,76-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի12-ի 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Ավագանին որոշում է՝

1.Թույլատրել մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրել համայնքի սեփականության հանդիսացող գույքը՝

1) Համայնքի սեփականություն հանդիսացող 0097-0018 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝0,55 հա հողատեսքը 49 տարի ժամկետով տրամադրել վարձակալության՝ կառուցապատման իրավունքով գործունեություն ծավալելու համար:

2) Համայնքի սեփականություն հանդիսացող 0072-0002,ծածկագրով 0,3հա և 0071-0047 ծածկագրով 0,6797 հա 3-րդ կարգի՝ գյուղատնտեսական նշանակության վարելահողերը 25 տարի ժամկետով տրամադրել վարձակալության գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:

2. Մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրման վարձավճարի չափ սահմանել՝ 3-րդ կարգի վարելահողերի համար 0072-0002 ծածկագիր 6000 ՀՀ դրամ ,0071-0047 ծածկագիր 14000 ՀՀ դրամ և գյուղատնտեսական արտադրական նշանակության հողի համար ծածկագիր 0,55հա 30000 ՀՀ դրամ:

Մրցույթային մեկնարկային քայլ՝ մեկնարկային վարձի 5% չափով:Մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ:

3.Համայնքի ղեկավարին՝հանձնարարել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությամբ տրամադրող հանձնաժողովին իրականացնելու սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՂԱՉԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ
6. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018 թվականի N 17-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող 0054-0018 3հա հողատեսքը , 0054-0019 0,875 հա հողատեսքը ծածկագրով գյուղատնտեսական այլ նշանակության և 032-029 0.8հա հողատեսքը v կարգի գյուղատնտեսական վարելահող և 0066-0043 0.01277հա գյուղատնտեսական արդյունաբերության,արտադրական նշանակության հողատեսքերը օտարել աճուրդային կարգով:

2. Աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել 0054-0018 3հա հողակտորի համար 180000 ՀՀ դրամ, 0054-0019 0,875 հա հողակտորի համար 53000 ՀՀ դրամ, 0066-0043 0.01277 հա հողակտորի համար 75000 ՀՀ դրամ և 032-029 0.8 հա հողակտորի համար 795000 ՀՀ դրամ:

3.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնելով Հայաստանի Հանարապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգին համաձայն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

4. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

5. ՂԱՁԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ

6. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 18

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<հողային օրենսգրքի>>7-րդ հոդվածի և միջգերատեսչական հանձնաժողովի 12.04.2018 թվականի թիվ 85 եզրակացությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ նշանակության 0,1 հա հողամաս (կադաստրային ծածկագիր 097-005) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության ՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՂԱՋԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ
6. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 19

ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՅՈՒՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանարապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18- րդ կետով ,Հայաստանի Հանարպետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի օգստոսի 3-ի 01/03,2/3220-17 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանարապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի վարչական տարածքում 2018 թվականի իրավաբանական անձանց աղբահանության վճարների դրյուքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՂԱՉԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ
6. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

Մարզի Տանձուտ համայնքի

Ավագանու

2018 թվականի ապրիլի 27-ի

N19 որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

1.Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության

Սպասարկման այլ ծառայություններ

1)իրավաբանական անձանց համար 1 քմ 30 ՀՀ դրամ

2)Պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար 1 քմ 3 ՀՀ դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Խուրշուդյան